Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/59580/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

23 նոյեմբերի 2022թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, թիվ 1965/22 գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2022թ. նոյեմբերի 15-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, թիվ 1965/22 գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումն և կից փաստաթղթերը դատավորի աշխատակազմին են տրամադրվել 2022թ. նոյեմբերի 18-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՀՀ ֆինանսների

նախարարությանն ուղղված՝ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, թիվ 1965/22 գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ/59580/02/22 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 2022թ. դեկտեմբերի 23-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ